ՌՈՒԲԵՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԲԵԿԳՈՒԼՅԱՆՑԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին՝ 1914-ից մինչև 1916 թվականի գարուն, ռուսական իշխանությունները հարկադրված էին վարել կայսրության ազգային փոքրամասնությունների, ներառյալ՝ հայերին սիրաշահելու քաղաքականություն: Կառավարության հրահանգով և աջակցությամբ կազմվում են հայկական կամավորական խմբեր: Օսմանյան Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց հետո կրկին օրակարգի հարց է դառնում Արևմտյան Հայաստանի ապագայի հիմնախնդիրը: Հայ հասարակությանը ոգևորեց 1915 թ. մայիսի 7-ին Ա. Մանուկյանին Վան քաղաքի և ազատագրված գավառների ժամանակավոր կառավարիչ (նահանգապետ) նշանակելը: Սակայն հայկական իշխանությունը կարճատև կյանք ունեցավ: Հուլիսի 11-ին սկսած կովկասյան 4-րդ բանակային կորպուսի նահանջը վերացրեց Վանի նահանգապետությունը: Նույնիսկ երբ 1915 թ. օգոստոսի 1-ին ռուսական զորքը վերագրավեց Վանը, այնտեղ այլևս հայերից կազմված կառավարման մարմին չստեղծվեց: Այս ամենը վկայում է, որ ռուսական կառավարությունը դեմ էր Արևմտյան Հայաստանում հայկական ինքնավար մարմին ստեղծելուն: Նշված վերաբերմունքն ավելի ընդգծվեց, երբ Կովկասի փոխարքա և Կովկասյան բանակի հրամանատար նշանակվեց մեծ իշխան Նիկոլայ Ռոմանովը: Նրա օրոք իշխանությունները սկսում են իրականացնել Արևմտյան Հայաստանի գաղութացումը՝ Ռուսաստանի տարբեր գավառներից ռուս վերաբնակիչներ տեղափոխելով Ալաշկերտի հովիտ:

Մեծ իշխանի վարած գաղութացման քաղաքականությունը համընկնում էր Ռուսաստանի նախարարների խորհրդի և Պետական դումայի մի շարք անդամների հակահայ հայացքներին: Նրանք կտրականապես դեմ էին ոչ միայն Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալուն, այլև այնտեղ որևէ ինքնավար մարմին ստեղծելուն: Ռուսաստանի նախարարների խորհրդի նախագահ Ի. Գորեմիկինի համոզմամբ «Հայաստանի ստեղծումը կարող է հետպատերազմյան շրջանում տարբեր բարդությունների աղբյուր դառնալ»[1]: Ռուսական բարձրագույն զինվորական և քաղաքացիական իշխանությունները զանազան արգելքներ էին հարուցում՝ խոչընդոտելով հայ փախստականների վերադարձը ոչ միայն Ալաշկերտ, այլև Արևմտյան Հայաստանի այլ գավառներ: Իհարկե, այդ ամենն արվում էր ոչ բացահայտ և պատճառաբանվում էր «ռազմական անհրաժեշտությամբ»: Ռուս նշանավոր քաղաքական գործիչ, Պետական դումայի անդամ Պ. Միլյուկովն առաջիններից էր, որ հրապարակավ մերկացրեց կառավարության հակահայ դիրքորոշումը: Չնայած այդ ամենին՝ ռուսական իշխանությունները փուլ առ փուլ իրականացնում էին Արևմտյան Հայաստանի գաղութացումը: Ծրագրեր էին մշակվում «Արաքսյան և Եփրատյան» կազակություն ստեղծելու համար: Ռուսական կառավարությունը մեծագույն զգուշությամբ էր վերաբերվում հայերին՝ ենթադրելով, որ նրանք կարող են դառնալ «երկրորդ Բուլղարիան»: Միաժամանակ, սադրիչ տեղեկություններ էին տարածվում հայ կամավորների և նրանց հրամանա-

[1] *Բանբեր Հայաստանի արխիվների, 2004, N 2, էջ 188:*

տարների մասին: Ռուսաստանի ներքին գործերի նախարարությունը 1915 թ. մայիսի 15-ին ներկայացնում է զեկուցագիր, որտեղ, խեղաթյուրելով փաստերը, փորձում է սևացնել հայ կամավորական շարժումը, նրա ղեկավարներին և նույնիսկ Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովին:

Ներքին գործերի նախարարությունը «տագնապով» տեղեկացնում էր, որ «դրուժինաների կազմակերպումը և հատուկ հովանավորությունը սրել էին հայերի և Կովկասի մյուս ժողովուրդների հարաբերությունները»: Ուստի, ելնելով երկրամասում բնակվող ժողովուրդների միջև «համերաշխություն» և «խաղաղություն» հաստատելու «մտահոգությունից», ՆԳ նախարարությունը կասկածի տակ է առնում դրուժինաների գոյության նպատակահարմարությունը: Առաջարկվում է հայ կամավորներին զինաթափել: Այս առաջարկը բողոքարկեց Կովկասյան բանակի շտաբը: Վերջինը իր մերժումը հիմնավորում է այն փաստով, որ նման քայլը «հավասարազոր է հակառակորդի դեմ կռվում գտնվող և արժեքավոր մարտական հատկություններ ցուցաբերած հայկական դրուժինաների լուծարմանը»[2]:

Նշենք, որ ռուս զինվորական և պետական գործիչների թվում կային ավելի սթափ մտածողներ, որոնք, հակառակ վերևից եկած հրահանգների ու ցուցումների, աշխատում էին իրենց հնարավորության սահմաններում օժանդակել հայ փախստականներին և նրանց օգնող հայ հասարակական-բարեգործական կազմակերպություններին: Ի վերջո, հայերը չէին, որ կազմակերպեցին Շամխորի կայարանում ռուս զինվորների կոտորածը:

Ներկայացվող երկու փաստաթղթերի հեղինակը Ռուբեն ավագ քահանա Բեկգուլյանցն է: Նա ծնվել է 1873 թ., 1880-1882 թթ. սովորել է Ստավրոպոլի Հայ եկեղեցական հոգևոր դպրոցում: 1882-1894 թթ. սովորել է Օդեսայի կայսերական համալսարանի իրավաբանական բաժնում: 1894- 1897 թթ. սովորել է Մոսկվայի կայսերական համալսարանի իրավաբանական բաժանմունքում: 1899 թ. հանձնել է պետական քննությունները և ստացել իրավաբանի դիպլոմ: 1903 թ. հունվարի 14-ին կաթողիկոսի հ. 34 կոնդակով պարգևատրվել է քահանայական լանջախով[3]:

1894 թ. սեպտեմբերի 14-ին ձեռնադրվել է սարկավագ և ժամանակավորապես եղել է Ստավրոպոլի Ս. Լուսավորիչ եկեղեցում: 1898-1899 թթ. ծառայել է Մոսկվայի հայկական եկեղեցում: 1900 թ. ձեռնադրվել է քահանա Սամարղանդի և Թուրքեստանի հովվական շրջանի համար: 1900 թ. օգոստոսին հրավիրվել է Սամարղանդի իգական գիմնազիա՝ հայ կրոնի պատմություն դասավանդելու: 1905 թ. հոկտեմբերից ստանձնել է Սամարղանդի նորաբաց հայկական ծխական դպրոցում կրոնի պատմության դասավանդումը:

Մինչև պատերազմը նա եղել է Նոր Նախիջևանի Ս. Լուսավորիչ եկեղեցու միաբան: 1912 թ. այցելել է Արևմտյան Հայաստան: Վերադառնալով Ռ. Բեկգուլյանցը իր տպավորությունների մասին հրատարակում է առանձին գրքույկ: 1915 թ. փետրվարի վերջին Կովկասյան բանակի հրամանատարությունը ավագ քահանային նշանակում է հայ զինվորական հովիվ: Այդ հանգամանքը նրան հնարավորություն է տալիս լինելու ռուս-թուրքական ռազմաճակատի տարբեր տեղամասերում: Տեր հայրն իր տպավորությունների մասին հոդվածներ է հրապարակել տարբեր պարբերականներում և մասնավորապես Մոսկվայում լույս տեսնող "Армянский вестник" շաբաթաթերթում:

---

[2] **Корсун Н. Г.,** *Алашкертская и Хамаданская операции на Кавказском фронте мировой войны 1915 г., М., 1940, с. 188-189.*

[3] *Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 56, ց. 14, գ. 227, թ. 26 և 32:*

Խորհրդային իշխանությունները Ռուբեն ավագ քահանա Բեկգուլյանցին 1927 թ. մայիսին ձերբակալում և աքսորում են Տոբոլսկ: Աքսորից վերադառնալով՝ մասնակցել է 1932 թ. Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեգյանի ընտրություններին[4]:

Ստորև ներկայացվող փաստաթղթերը, որոնք պահպանվում են Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ), տպագրվում են առաջին անգամ, ուղղագրական և կետադրական որոշ շտկումներով ու ոճի պահպանմամբ: Մեր միջամտությունները արվել են ուղղաձիգ փակագծերով: Բոլոր ընդգծումներն արվել են փաստաթղթում: Փաստաթղթերի վերնագրումը կատարել ենք մենք:

ՍԱՀԱԿՅԱՆ Ռ. Օ.

N

ՌՈՒԲԵՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԲԵԿԳՈՒԼՅԱՆՑԻ ՆԱՄԱԿԸ ԳԵՆԵՐԱԼ Թ. ՆԱԶԱՐԲԵԿՅԱՆԻՆ[1] ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԱՐԱԾՎՈՂ ԿԵՂԾ ԼՈՒՐԵՐԻ ՄԱՍԻՆ

29 հունիսի 1916 թ.
Թիֆլիս

Глубокоуважаемый Фома Иванович!

Пользуюсь случаем и пишу Вам. После Н[ового] года я побывал в районе Баратова[2], Ікорпуса и 2-го Турк[естанского корпуса]. Только что вернулся из Чорохск[ого] края. Пишу из Тифлиса. Надеюсь, Вы здоровы. Случайно видел здесь Докучаева в ген[ералском] мундире.

Теперь здесь гостит наше Святейшество Католикос[3]. Ему оказан весьма торжественный при¸м. Наместник[4] жаловался, что в Ванском районе армяне производят такие бесчинства, что он не решился передавать католикосу, так это мерзко. Что назначено следствие и прид¸т князь Щербатов для произв[одства] следствия и со стороны армян будут назначены двое. Я также хочу к тому времени быть у Вас, а б[ыть] м[ожет] даже в качестве представителя католикоса, хотя мне не хотелось бы.

Мне думается, что многое и Вам известно и на Вас лежит некоторого рода обязанность заступиться за родной народ. Удивительно, точно все злые демоны собрались на погибель нашей нации. Вс¸ гадкое, вс¸ низкое, вс¸, что может повредить армянам, преподносится наместнику в сгущ¸нном виде, в смысле вредном нашему делу. Вс¸ хорошее забывается, вс¸ что делают армяне, не замечают.

[4] **Ստեփան Կերտող** *(Ստեփանյանց), Գիրք տառապելոց. 1920-1950-ական թվականների բռնությունների զոհ հայ հոգևորականներ, Ե., 2002, էջ 15:*

Боже мой! Сколько злобы, шипения, зависти, лжи и фальши. В Эрзеруме вакханалия…[многоточие в документе]. В Соучбулаге казаки во главе с Терменом[5] перебили 5000 курдов (в том числе женщин и детей). Спрашиваю: при помощи арм[ян] добровольцев? “Не было ни одного, были только казаки”. Это я слышал из уст генер[ала] Термена. Он начальн[ик] штаба у Чернозубова[6]. Казаки делают–ничего. Но они же пример подают. Сделают добров[ольцы]–в пол[евой] суд, расстрелять[7]. Вся Турция разграблена, все ковры перевез[ены] на Кавказ, ш¸лковые материи носят проститутки. Это не видно. Армяне перекупят у казака или солдата худую корову–кричат: марод¸рство и спешат донести наместнику.

Армянин убь¸т курдийку или турчанку–зверство. Этим делом занимаются казаки, солдаты, офицеры с генер[алами] во главе — это по взаимному соглашению. Хорошее соглашение, если турки волком воют и идут с жалобой к Пржев[альскому][8], увы, целоваться. Увидимся, Бог даст, поговорим. Если я дойду до Хныса-кала, т. е. у Вашего корпуса, то просил бы Вашего содействия для приезда в Муш и Битлис. В сво¸ время я дам знать, когда выеду и когда буду в Хнысе.

Будьте здоровы. Жму вашу руку.
Ваш св[ященник] Р[убен] Бекгульянц.
Мой сердеч[ный] привет врачам и штабным.

ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 28, թ. 7: Բնագիր: Ձեռագիր:

N

ՌՈՒԲԵՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԲԵԿԳՈՒԼՅԱՆՑԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Ե-ԻՆ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՎԵՐԱԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 23 1 նոյեմբերի 1915 թ.
ի Ս. Էջմիածին

Նորին Վեհափառության
Տ. Տ. Գեորգ Ե. Սրբազնագույն կաթողիկոսին Ամենայն Հայոց
Ռուբեն ավագ քահանա Բեկգուլյանցից
Ամենախոնարհ հայտարարություն

Անցյալ հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսների ընթացքում պաշտոնիս վերաբերյալ գործերով ես ճանապարհորդեցի ռուսական քաջարի զորքերի նվաճված Հայաստանի զանազան մասերը՝ Բաբերդ, Երիզա, Խնուս և սոցա շրջանները:

Կամենալով հայ զինվորների համար ժամերգություն կատարել, ես մտա Բաբերդի առաջնորդարանին կից մայր եկեղեցին: Ինձ հայտնեցին, որ այդ

եկեղեցում անհարմար է ժամասացություն կատարելը, քանի որ մեջը սկսվել է վերանորոգում ռուսաց եկեղեցի դարձնելու համար: Ես ստիպված եղա գնալ հարևան հայոց եկեղեցին, որը ժամանակին դպրոցի էր հատկացված:

Կարինի մոտ գտնվող Իլիճա ավանի հայոց եկեղեցին զինվորական իշխանության հրամանով ձևափոխվել է ուղղափառ եկեղեցու: Հասարակ ժամերգություն կատարելով այդ եկեղեցում Ս[ուր]Բ~ հաղորդության արժանացրի հայ զինվորներին:

Խնուսի հայոց միակ եկեղեցին, որ գտնվում է ձորի մեջ՝ հայոց թաղում, արդեն դառել էր գարնիզոնի [կայազորի] ուղղափառ եկեղեցի և կոմենդանտի [պարետի] ասելով պիտի ծախսվեր 10 հազար ռուբլի այդ եկեղեցին լիովին ռուսաց եկեղեցու ձևին հարմարացնելու համար:

Շամիրամ գյուղի հայ եկեղեցին նույնպես դարձել է բանակի ռուսաց եկեղեցի: Շամիրամը գտնվում է Գուռ-գուռ լեռան ստորոտում:

Հասան-Ղալայի և Քյոփրիքյոյի եկեղեցիները նույնպես դարձել են ռուսաց եկեղեցի, սակայն այս վերջինները ինձ չհաջողվեց տեսնելու ժամանակի կարճ լինելու պատճառով: Ես լսեցի այդ տեղացիներից:

Փրխուս հայոց գյուղում, որը գտնվում է Վանա ծովի մոտերքը, կա մի մեծ սյունազարդ հին եկեղեցի: Այդ եկեղեցին սկզբում N 100 զինվորական հացթխատունը դարձրել էին նոր թխված հացերի համար պահեստ, իսկ սեպտեմբերի 20-ից նոր նշանակված կոմենդանտը հրամայեց հացերը հանել և եկեղեցին հատկացրեց իր 50 հոգի զինվորների բնակության համար:

Մամախաթունից 5 վերստ հեռավորության վրա գտնվում է Խումլար գյուղը: Գյուղի երկու եկեղեցիներից մեկը մեր զորքերը նույնպես դարձրել էին իրենց համար բնակարան:

Ճանապարհորդությանս ընթացքում ես տեսել եմ բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ, որոնց Սեղանները քանդված ու ապականված են տաճիկների ձեռքով:

Շատ տեղեր ես տեսել եմ եկեղեցիների մեջ մարդկային կմախքների մասեր՝ գանգեր, ձեռքեր ու ոտքեր: Թվել տաճիկների սխրագործությունները մեր եկեղեցիների և վանքերի վերաբերմամբ իմ ուժերից վեր է:

Բախտավոր բացառություն է կազմում Կարինի մայր եկեղեցին և նրան կից Տաճար անվանված դարավոր մատուռը:

Վերոգրյալը պարտք համարեցի զեկուցանելու Ձերդ Վեհափառությանը:

Ձերդ Սուրբ Օծությանը աջը համբուրող ամենախոնարհ որդի Ռ[ուբեն] ա[վագ] ք[ահանա] Բեկգուլյանց [ստորագրություն]

Մակագրություններ՝ «թ[իվ] 2541»: «1/X 1916»: «Գրել փոխարքային»: «Վեհի կողմից գրութ[յուն] պատրաստել հանուն Տ[եր] փոխարքայի»:

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 57, ց. 2, գ. 427, թ. 1 և շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նազարբեկով Ֆոմա Իվանի (1855-1931) – գեներալ-լեյտենանտ: Պատերազմի սկզբում՝ Կովկասյան 2-րդ հրաձգային բրիգադի, իսկ 1915 թ. վերջից՝ 2-րդ հրաձգային դիվիզիայի պետ: 1917-1918 թթ. ղեկավարել է հայկական կորպուսի կազմակերպումը և մարտական գործողությունները թուրքական զորքերի դեմ: Եղել է Հայաստանի Հանրապետության զոր-

քերի հրամանատարը, իսկ 1919 թ. մարտից՝ զինվորական խորհրդի նախագահ:

2. Բարաթով Նիկոլայ Նիկոլայի (1865-1932) - հեծելազորի գեներալ: Պատերազմի սկզբում՝ Կովկասյան 1-ին կազակային դիվիզիայի հրամանատար: 1915 թ. հոկտեմբերից՝ Ռազմարշավային, իսկ 1916 թ. հունիսից՝ Կովկասյան հեծելազորային կորպուսի հրամանատար:

3. Գևորգ Ե Սուրենյանց (Տփղիսեցի, (1911-1930) - Ամենայն հայոց կաթողիկոս:

4. Ռոմանով Նիկոլայ Նիկոլայի (1856-1929) - գեներալ-համիարզ: 1915 թ. օգոստոսի 23-ից մինչև 1917 թ. մարտի 2-ը՝ Կովկասի փոխարքա, Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար:

5. Տերմեն Ռիչարդ Իոսիֆի (1870-1930) - գեներալ-մայոր, արևելագետ: Պատերազմի սկզբում՝ Կուբանյան 1-ին պլաստունյան բրիգադի, ապա Թուրքեստանյան 5-րդ հրաձգային դիվիզիայի շտաբի պետ:

6. Չեռնոզուբով Ֆեոդոր Գրիգորիի (1863-1919) - գեներալ-լեյտենանտ: Պատերազմի սկզբում՝ Կովկասյան 4-րդ կազակային դիվիզիայի պետ, 1916-ից մինչև 1917 թ.՝ Կովկասյան 2-րդ հեծելազորային, 8-րդ, ապա 5-րդ Կովկասյան բանակային կորպուսների հրամանատար:

7. 1916 թ. սեպտեմբերին Հայկական 7-րդ կամավորական խմբի վեց մարտիկների Ռազմադաշտային դատարանը դատապարտել էր մահվան: Տե՛ս «Աշխատանք», Երևան, 14 սեպտեմբերի 1916, N 39: Դատավճիռը ընդունվել է հապշտապ, առանց վկաների հարցաքննության: Դատարանի վրա ճնշում է գործադրել գեներալ Ֆ. Գ. Չեռնոզուբովը, որը ցանկանում էր դառնալ «Քրդստանի» նահանգապետ:

8. Պրժևալսկի Միխայիլ Ալեքսեյի (1859-1934) - հեծելազորի գեներալ: Պատերազմի սկզբում՝ Կուբանյան 1-ին պլաստունյան բրիգադի, 1915 թ.՝ Թուրքեստանյան 2-րդ կորպուսի հրամանատար: 1917 թ. ապրիլի 3-ից մինչև մայիսի 31-ը՝ Կովկասյան բանակի հրամանատար, ապա մինչև դեկտեմբերի 28-ը՝ Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար: